Գիտական աշխատություններ» /ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն; խմբ. Ս.Հայրապետյան,-Եր.:Գիտություն, 2013, հատոր 15,-188 էջ:

Լույս տեսավ ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ» ժողովածուի XV հատորը 12,5 տպագրական մամուլ ծավալով, պրոֆ. Ս. Հայրապետյանի ընդհանուր խմբագրությամբ:

Հատորում ընդգրկված են 23 հոդվածներ, հրապարակումներ և հաղորդումներ հայագիտության և հումանիտար այլ գիտությունների ոլորտներից:

Հոդվածների ճնշող մեծամասնությունը վերաբերում է շիրակագիտության տարբեր ոլորտներին: Դրանցից վեցը նվիրված է հայոց պատմական գավառի հնագույն շրջանի պատմության և հնագիտության հարցերին: Ս.Պետրոսյանի «Քսենոփոնյան «Հնդիկ»-ի թագավորությունը և սեպագրային էթիունին» հոդվածը մ.թ.ա. 7-րդ դարի վերջերից 6-րդ դարի վերջերն ընկած ժամանակաշրջանին վերաբերող մի աղբյուրի քննություն է, որտեղ, ըստ հեղինակի վարկածի, խոսվում է էթիունի հայկական ցեղամիության մասին, որն աստիճանաբար ընդարձակվել և հզորացել է, ապա անկախությունը կորցրել Դարեհ I-ի օրոք:

Օրոնտես-Երվանդին նույնացվող, Վաղարշակի կողմից կանոնավորված արմավիրյան դիցական եռակի պաշտամունքը, որը գլխավորել է հայկական հելլենական-հեթանոսական պետության պանթեոնը, համապատասխանել է երկրի սոցիալական դասերին /Լ.Պետրոսյան/: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն պահպանվել է նաև Արտաշես I-ի օրոք, ինչպես նաև Տրդատ III-ի գահակալության առաջին տարիներին և խոր արմատներ է ունեցել հայոց կրոնական պատկերացումներում, փոխակերպվելով դրսևորվել նույնիսկ քրիստոնեության շրջանում:

Հայտնի է, որ Վարդգես Մանուկն ու իր հիմնադրած Վարդգեսական բնակավայրը հիշատակվել են պատմահայր Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ, ինչից տեղեկանում ենք, որ ապագա Վաղարշապատի տարածքում գոյություն է ունեցել Վարդգեսական բնակավայրը Արտիմեդ քաղաքը /Ս. Պետրոսյան/:Առասպելաբանական բառերի ստուգաբանական քննության արդյունքում հոդվածի հեղինակը եկել է այն եզրակացության, որ բուն առասպելում Վարդգես Մանուկն ընկալվել է որպես ձկնամարդ, որը, ըստ հնագույն հավատալիքների, հանդիպել է Հայոց լեռնաշխարհում և ներկայացնում է ջրից սերված առասպելաբանական էակ /որպես նախատիպ նշվում են Արագածի ձկնակերպ կոթողները/: Սակայն ի տարբերություն նախորդների՝ Վարդգես Մանուկը չի վերադարձել ջրային միջա-

միջավայր, այլ ամուսնացել է արքայադստեր հետ և Քասախ գետի ափին կառուցել Վարդգեսավանը: Հոդվածագիրն ըստ այդմ է ստուգաբանում Վարդգես, Շաղավարդ, Վարդավառ բառերը:

«Շիրակի վարչական բաժանումը Ք.ա. VIII-VI դդ.» հոդվածում Ի.Ավագյանն անդրադարձել է Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ տեղ գտած արժեքավոր հիշատակություններին: Ըստ այդմ, Ք.ա. VIII-VI դդ. Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան մասի ցեղերը, հետզհետե համախմբվելով, ստեղծել էին բավականին ուժեղ ցեղամիություններ: Դրանցից մեկի կենտրոնն էր հետագա Շիրակը, որի բնակչության էթնիմ-եախնին, հավաքական կերպարի բանահյուսական անձնավորումն էր հայկազն Շարան: Հոդվածում նշվում է, որ հայկական հին ավանդազրույցների համաձայն Շարայից և նրա սերունդներից էին սերված վաղ միջնադարյան Հայաստանի Շիրակում, Արշարունիքում և Գուգարքում իշխած հայկական ծագումով նախարարական տները:

Վաղբրոնզիդարյան Մեծ Մեպասարում իրականացրած տարեկան հնագիտական պեղումների արդյունքներին են նվիրված Լ. Եզանյանի երկու հոդվածները, որոնցից առաջինը նվիրված է հայոց մեջ հազվագյուտ հանդիպող գայլերի զոհաբերության ծեսին, որն առկա է Մեծ Մեպասարում: Նշվում է, որ ծեսից հետո սրբարանի արևմտյան կողմում թաղվել են միայն գայլերի գլուխները, որոնց միայն ստորին ծնոտները հայտնաբերվել են սրբարանի հատակի տարբեր մասերում:Հնագիտական փաստերի համադրումը հնագույն ծեսերին, հավատալիքներին և սովորույթներին, հեղինակին թույլ են տվել պնդելու, որ վաղ բրոնզի դարաշրջանում հնդեվրոպական ցեղերով բնակեցված Մեծ Մեպասարում այս զոհաբերությունը նվիրվել է Ամպրոպի աստվածությանը, և այդ ծիսակարգում առանձնակի կարևորվել է գլխի զոհաբերությունը:

Հեղինակի հաջորդ հոդվածն ուղղակիորեն առնչվում է նախորդին, քանի որ վերաբերում է Մեծ Մեպասարում մ.թ.ա. XVIII-XVIդդ. թվագրվող մի ծեսից պահպանված նյութական մնացորդներին: Ծավալվելով «Քուտարաքսյան մի կրասի զարդագոտու սիմվոլիկայի շուրջ» Լ.Եզանյանը նշում է, որ այն եզակի փաստ է հնդեվրոպական ցեղերի հոգևոր մշակույթի հավատալիքների, պաշտամունքի և ծեսերի ուսումնասիրման համար: Դրանք հաստատում են պատկերազարդման բովանդակության կապը ծիսակարգի հետ, քանզի այստեղ արտացոլված է գարնան գալուստը և նոր տարվա սկիզբը կամ տիեզերական կարգուկանոնի վերականգնման համար մղված պայքարում վիշապամարտիկի տարած հաղթանակին նվիրված ծեսի բովանդակությունը:

Ժողովածուում տեղ են գտել նաև Հայաստանի նոր շրջանի պատմությանը առնչվող հոդվածներ:

Հ.Փանոսյանի «Ժողովրդական տեղաշարժերը թուման-ե Նախիջևանի Ազատ-Ջիրանի ու Դարաշամբի մանյաներում /XVII դ. կես/» հոդվածը նվիրված է Նախիջևանի երկրամասի ժողովրդագրական խնդիրներին մասնավորապես տեղի հայ բնակչության տեղաշարժերի ուսումնասիրությանը: Արխիվային տարբերյալ նյութերի հիման վրա հոդվածում բացահայտվում է, որ XVIIդ. առաջին կեսին պարսկա-թուրքական բախումների ժամանակ տեղի ունեցած ժողովրդագրական մեծ տեղաշարժերի հետևանքով Նախիջևանի գավառի հայ բնակչության թվաքանակը արագորեն նվազել է: Եվ չնայած դրան էթնիկական լուրջ տեղաշարժեր տեղի չեն ունեցել, և հայ բնակչությունը շարունակել է մեծամասնություն կազմել գավառում:

Բացառիկ ծանրագույն պայմաններում 1918թ-ին ստեղծված Հայաստանի Հանրապետությունում տեղական ինք-

նակառավարման համակարգը ներդրվել է աստիճանաբար: Նախ 1919թ. ստեղծվել են տեղական կառավարության քաղաքային, ապա 1920թ. գավառային մարմինները: Կ.Ալեքսանյանի հոդվածում համարժեք փաստերի վերլուծությամբ պարզվել է, որ ՀՀ պետական իշխանության և Ալեքսանդրապոլի տարածքային պետական և տեղական ինքնակառավարման մարմինները չեն կարողացել հանդես գալ որպես մեկ ամբողջական մարմին՝ ընդհանուր պետական շահերով: Հեղինակը եզրակացնում է, որ իրավասությունների համար պայքարը, հատվածական և կուսակցական մոտեցումը, պետական շահի բացակայությունը արգելակել են երկրի համաչափ զարգացումը և թուլացրել պաշտպանունակությունը:

Նույն ժամանակաշրջանին է առնչվում նաև Ա.Հայրապետյանի «Մտորումներ Ալեքսանդրապոլի հայ-թուրքական պայմանագրի շուրջ» հոդվածը: 1920թ. բռնազավթված Ալեքսանդրապոլում ստորագրվեց քեմալական Թուրքիայի կողմից սանձազերծված պատերազմի արդյունքներն ամփոփող, բռնի ուժով պարտադրված ծանրագույն մի պայմանագիր, որով կասկածի տակ դրվեց հայոց պետականության հետագա գոյությունը: Պատմաքաղաքական կնճռոտ հարցերի քննության արդյունքում հեղինակը մի կողմից՝ կարևորում է այդ պայմանագրի քաղաքական, քարոզչական և հոգեբանական մեծ ազդեցությունը հայ-ռուս-թուրքական հետագա հարաբերությունների վրա, մյուս կողմից՝ փաստում, որ այն որոշակի դեր է կատարել 1921թ. մարտի 16-ի Մոսկվայի պայմանագրով Ռուսաստանի կողմից Թուրքիայի տարածքային ձեռքբերումների ճանաչման գործում՝ առանց Խորհրդային Հայաստանի կարծիքը հաշվի առնելու:

Ալեքսանդրապոլ-Լենինականի գավառի գյուղատնտեսության դրությանն է անդրադարձել իր հոդվածում Ա.Բոյաջյանը: XIXդ. վերջին և XXդ. սկզբին հայկական գյուղը դեռ ամբողջովին չէր ազատագրվել ավատատիրական հարաբերություններից, գյուղատնտեսական հողերը հիմնականում պետության, կալվածատերերի և հոգևոր հաստատությունների սեփականությունն էին: Այդ պատճառով գավառում գյուղատնտեսական ռեֆորմների դերի ու նշանակության մեջ կարևորվում է դրանց գործուն ազդեցությունը բնակչության սոցիալական կազմի վրա:

Կ.Սահակյանի ու Ռ.Հովհաննիսյանի հոդվածը նվիրված է հայոց մեջ հացին առնչվող ժողովրդական պատկերացումներին և հավատալիքներին: Դրանք դարերով ամրագրվել են հայ ժողովրդի ծիսամշակութային կենցաղում, ինչպես և նրա բազմազան ձևերը՝ արևհացեր, լուսնաձև, խաչաձև և գուշակության հացեր և այլն: Սրանք վկայում են, որ լինելով ինքնաբերական և գիտակցական պաշտամունքի առարկա՝ հացը մշտապես դիտվել է բազմագործառութային նշանակությամբ, պաշտվել որպես հատիկային Աստծո նշանակ:

Մի շարք հոդվածներում արծարծված են արդի հայերենի և գրականության խնդիրներ. «Նորաբանությունները քաղաքական PR-ի լեզվում» /Լ.Գիրակոսյան/, «օտարաբանությունների ոճական արժեքը Զ.Խալափյանի ստեղծագործություններում» /Ա.Սարգսյան/, «Հոմանիշ բառերի կիրառությունը Ե.Չարենցի «Գիրք ճանապարհի» ժողովածուի մեջ» /Ս.Զաքարյան/, «Ա.Միարոնյանի կյանքը և ստեղծագործության ընդհանուր բնութագիրը» /Գ.Խաչիկյան/:

«Գիտական աշխատություններում» տեղ են գտել նաև Ա.Ակոպովի «Արևմտյան Շիրակը Կարսի գեներալ-եռանգապետի զեկուցագրերում 1800-ական թթ.», Գ.Այվազյանի «Կովկասի հայոց բարեգործական ընկերության Ալեքսանդրապոլի մասնաճյուղի գործունեությունը 1884-1899 թթ.», Լ.Աբաեսյանի «Սուսաննա Մկրտչյան արվես-

տագետը», Հ.Հարությունյանի «Շիրակի պարեղանակները Ա. Բրուտյանի գրառումներում», Կ.Բազեյանի «Շիրակի արդի արհեստները /ըստ 2012թ. իրականացված դիտանցման/», Հ.Աբրահամյանի «Շիրակի վարդավառյան ուխտավայրերը» հաղորդումներն ու հրապարակումները:

«Գիտական աշխատություններ» ժողովածուի 15-րդ հատորում տպագրված նյութերն ընդգրկում են համառոտ ռուսերեն և անգլերեն ամփոփումներ: Ժողովածուն ավարտվում է «Գիտական լրատու» բաժնի ուշագրավ նյութերով:

❖

2013 թ. լույս տեսավ Կենտրոնի գիտաշխատող, պատմաբան Ա.Ակոպովի հեղինակած «Տայք. վարչաժողովրդագրական պատկերը XVI դ.մինչև XIX դ.առաջին երեսնամյակը» մենագրությունը:

Այն նվիրված է Մեծ Հայքի Տայք աշխարհին և ներկայացնում է XVI դարից մինչև XIX դարի առաջին երեսնամյակը Կարսի, Ախալցխայի և Էրզրումի նահանգների միջև տարրալուծված Տայքի վարչատարածքային բաժանումները, բնակավայրերի տեղագրությունն ու տեղաբաշխումը, էթնոժողովրդագրական տեղաշարժերը և այլ հիմնահարցեր: Աշխատության մեջ անդրադարձ է կատարվել նաև Տայքի հին և միջնադարյան շրջանների պատմությանը՝ հատուկ ուշադրության արժանացնելով Տայքի հայության շրջանում քաղկեդոնականության տարածման շարժառիթներին և ընթացքին:

Մենագրությունը բաղկացած է 213 էջից, իսկ գիտատեղեկատու համակարգը ներկայացված է ծանոթագրություններով, անձնանունների և տեղանունների ցանկերով: Այն հասցեագրված է և՛ պատմաբաններին, և՛ ընթերցող լայն հանրությանը:

❖

2013թ. ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի գիտխորհրդի որոշմամբ լույս տեսավ ավագ գիտաշխատող, ճանաչված ազգագրագետ, վաղամեռիկ Հասմիկ Ափինյանի «Սիրո երգիչ. Աշուղ Իգիթ» մենագրությունը, որ հրատարակման պատրաստվեց կենտրոնի գիտքարտուղար, արվեստագիտության թեկնածու Հ.Հարությունյանի ջանքերով:

Խորհրդային տարիները հայ ազգային աշուղական երգարվեստի զարգացման կարևոր ժամանակահատված էին, երբ ասպարեզ եկած երգիչ-բանաստեղծները՝ Խայաթը, Աշխույժը, Ռազմիկը, Հրկեզը, Սմբատը, Գրիգորը և ուրիշներ, իրենց երգարվեստով հող նախապատրաստեցին Հավասի, Աշոտ, Շահեն աշուղների «եռաստղ համաստեղության» գործունեության համար: Այս եղանկի ստեղծագործության մեջ էլ բուրեղացան և որոշակիացան սկզբունքներ, որոնք և բնութագրական եզանակություն ունեցան այդ արվեստի հետագա զարգացման համար:

Անվիճելի է, որ նոր ժամանակների երգիչների ստեղծագործությունը խարսխված է Ալեքսանդրապոլի դպրոցի ավանդույթներին: Ակունքը՝ հայ ազգային ժողովրդական երգային բառապաշարն է, բայց այլ գույներով ու մտածողության բոլորովին թարմ շնչով: Սա թերևս ժամանակի հետ առնչվող նոր մոտիվների առկայությամբ էր պայմանավորված, առավելապես ժամանակակից մարդու հուզաշխարհի, նրա զգացմունքների բազմաբնույթ արտացոլմամբ:

Ազատ ու անկախ հայրենիք, կառուցվող նոր քաղաք, հավերժական սեր էր գովերգում նաև նույն ժամանակների երգիչ աշուղ Իգիթը, որի անունը միշտ չէ, որ հիշատակվում է խորհրդային շրջանի աշուղների շարքում: Ի տարբերություն իր սերնդակից ու գրչակից ընկերների, որոնք, գործունեությունը սկզբնավորելով ծննդավայրում, հետո կենտրոնացան մայրաքաղաքում, Գեղամ Մարտիրոսյանը մնաց հայրենի քաղաքում և մինչև կյանքի վերջն ապրեց ու հիմնականում ստեղծագործեց Լենինական – Գյումրիում:

Իգիթը սիրված և հանրաճանաչ աշուղ է: Նրա երգերը բերանացի երգում են թե՛ քաղաքային, թե՛ գյուղական միջավայրերում, հնչում են ռադիոով, հեռուստատեսությամբ: Մինչ օրս, սակայն, նրա ստեղծագործությունը խորությամբ չի ուսումնասիրվել: Նրա երգերի մեծ մասը պահպանվում է ժապավենների վրա ձայնագրված, մի մասն էլ ձեռագիր-սնագիր վիճակում է: Հրատարակված միակ գիրքը «Շիրակն իմ մուսան» ժողովածուն է՝ կոմպոզիտոր Ազատ Շիշյանի ձայնագրություններով, որում ընդգրկված է աշուղի երգանիի չափազանց համեստ հատվածը, ընդամենը 35երգ, մինչդեռ Գեղամ Մարտիրոսյանի եղանակավորած երգերի թիվը հասնում է մոտ 250-ի: Առանձին նմուշներ էլ հրատարակվել են մեկ-երկու այլ ժողովածուներում՝ հիմնականում քաղված վերոհիշյալ գրքից:

Աշուղի ստեղծագործությանը վերաբերող որևէ երաժշտագիտական հետազոտություն չկա: Իգիթի երգերի վերաբերյալ մի փոքրիկ դիտարկում կա նաև Ք.Քուշնարյանի գրքում:

Սույն աշխատության մեջ առաջին անգամ փորձ է արվել ներկայացնել աշուղ Իգիթ ստեղծագործողին: Անդրադարձ է կատարվել ինչպես հրատարակված, այնպես էլ մոտ վեց տասնյակի հասնող անտիպ երգերին, որոնք գրառվել և վերծանվել են աշուղի հետ համատեղ աշխատանքի ընթացքում: Այս հրատարակությամբ արժեքավոր նմուշներով կհամալրվեն ոչ միայն աշուղի երգային ժառանգությունը, այլև հայ աշուղական երգի գանձարանը:

❖

«Պատմամշակութային ժառանգություն և արդիականություն»
միջազգային գիտաժողով
4-6 հոկտեմբերի, 2013թ.

Միջազգային գիտաժողովի կազմակերպիչը ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնն էր, որը նման մեծածավալ գիտական միջոցառումների անցկացման լավ փորձ ունի:

«Պատմամշակութային ժառանգություն և արդիականություն» գիտաժողովը նպատակ էր հետապնդում մի կողմից՝ հայտածել մեր երկրում հնագիտական, ազգագրական, պատմագիտական թեմատիկայով իրականացվող հետազոտությունների արդի մակարդակը, քննարկել ուսումնասիրվող մի շարք իրողությունների ու հարցերի նորովի մեկնաբանություններ, մյուս կողմից՝ պայմանավորված ԱՊՀ և այլ երկրների գիտնականների մասնակցությամբ՝ երպաստել մշակույթի մասունքների ուսումնասիրության բնագավառում տարբեր երկրներում կուտակված փորձի փոխանակմանը, մասնագիտական ու անձնային շփումներին, միմյանց պատմամշակութային արժեքներին հաղորդակցվելուն:

Գիտաժողովի անդրանիկ լիագումար նիստը, որ գումարվեց «Հոկտեմբեր» մշակույթի կենտրոնում, նվիրված էր ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի 70-ամյակին: Ակադեմիայի անցած փառավոր ուղու, նրա ձեռքբերումների ու արդի մարտահրավերների մասին զեկուցմամբ հանդես եկավ ԳԱԱ Շիրակի հայագիտական կենտրոնի տնօրեն, բանասիրության դոկտոր Ս.Հայրապետյանը:

Գիտաժողովի ծրագրում ընդգրկված 147զիտական զեկուցումների գերակշիռ մասի /87/հեղինակները Հայաստանի Հանրապետության ԳԱԱ համակարգի, նաև բուհերի հայագիտական ու ամբիոնների ներկայացուցիչներ էին՝ հիմնականում հանրապետության /և ոչ միայն/ գիտական շրջաններում քաջ հայտնի հնագետներ, բանագետներ, ազգագրագետներ, պատմաբաններ, ֆոլկլորիստներ և բանասերներ, նաև՝ երիտասարդ գիտնականների բավականին ներկայացուցչական կազմ: Նույն թեմատիկայով Գյումրիում նախկինում անցկացված երկու միջազգային գիտաժողովների /2007,2010/ համեմատությամբ հայ գիտնականների մասնակցությունը վերջին գիտաժողովին ավելի ներկայացուցչական եղավ և առավել արդյունավետ. հնագիտության, մարդաբանության և վիմագրության մասնաճյուղում՝ 13 զեկուցումներ, պատմագիտության և ժողովրդագրության մասնաճյուղում՝ 14, ազգագրության, բանագիտության և էթնոսոցիոլոգիայի մասնաճյուղում՝ 28, ճարտարապետության և արվեստաբանության մասնաճյուղում՝18, բանասիրության մասնաճյուղում՝13: Մեր գիտնականների զեկույցների ճնշող մեծամասնությունն աչքի ընկավ ուսումնասիրվող խնդիրների խորը իմացությամբ, քննարկման ներկայացվող հարցադրումների լայն ընդգրկմամբ ու հաճախ նաև՝ նորովի մեկնաբանություններով:

Առանձնակի հետաքրքրությամբ լսվեցին և աշխույժ քննարկումներ առաջացրին ճարտարապետներ Մ.Հասրաթյանի, Ա.Գրիգորյանի /Երևան/, ազգագրագետներ, Ժ.Խաչատրյանի /Երևան/, Կ.Սահակյանի/Գյումրի/, Եր. Մարգարյանի, Հ.Սարգսյանի, Ս.Հմայակյանի /Երևան/, Հ.Հարությունյանի /Գյումրի/,

լեզվաբաններ Լ.Խաչատրյանի, Ջ.Բառնասյանի /Երևան/, գրականագետներ Ս.Մխիթարյանի/Երևան/, Ա.Հակոբյանի /Գյումրի/, հնագետներ Լ.Եգանյանի /Գյումրի/, Ա.Մանուչարյանի, Ա.Ժամկոչյանի/Երևան/, պատմաբաններ Ա.Հայրապետյանի, Ս.Պետրոսյանի /Գյումրի/, Ա.Վիրաբյանի, Ռ.Օհանջանյանի /Երևան/, Ս.Պապիկյանի/Լ.ՂՀ/, գրող Ա.Հովհաննիսյանի և այլոց գիտական հաղորդումները: Դրանք նաև վկայություն են այն բանի, որ մեզանում վերջին տարիներին նկատելի առաջընթաց է արձանագրվում հայագիտության բնագավառում, մեր ժողովրդի հնագույնագույն պատմամշակութային ժառանգության ուսումնասիրության գործում, մասնավորապես հայոց նորագույն շրջանի պատմության բազմաթիվ վիճահարույց հարցերի նորովի լուսաբանման մեջ ազգաշահ և իրատեսական մոտեցումներում, ազգաբանության բնագավառում ավանդականի կողքին նոր ուղղությունների՝ ազգահոգեբանական, ազգաստիրոգիական բնույթի հետազոտությունների թվաքանակի նկատելի աճի, նաև դրանց որակական մակարդակի բարձրացման մեջ:

Գիտաժողովը հնարավորություն տվեց ի մոտո ծանոթանալու մի շարք հնագիտական հուշարձանների /Արտաշատ, Դվին, Մեծ Սեպասար, Հայկաձոր, Երերույք, Անի, Հովհաննավանք և այլն/ հետազոտման բնագավառում առկա նոր ձեռքբերումներին: Հատկապես կարևորվեցին նոր սերնդի դասախոսական գործում ազգամշակութային ժառանգության տեղին օգտագործման խնդիրը, ազգամշակութային տարածքում ազգային արժեքների փոխակերպումների ուսումնասիրության անհրաժեշտությունը, մշակութային կապիտալի դրսևորման ձևերն ու առանձնահատկությունները, մշակութային երկխոսության և փոխառնչությունների արդիական հնչեղություն ունեցող հարցերը, արդի միգրացիոն երևույթների, ի մասնավորի, արտագաղթի սոցիալ-տնտեսական և բարոյահոգեբանական պատճառների անաչառ ուսումնասիրությունն ու մեկնաբանությունը: Միևնույն ժամանակ մի շարք զեկուցումներում իրավացիորեն նշվեց նաև պատմամշակութային ժառանգության ուսումնասիրության գործում առկա դժվարությունների պատճառով /հիմնականում ֆինանսական/ ազգագրական ու բանահյուսական գիտարշավների և սոցիոլոգիական հարցումների պակասի, հատկապես արտասահմանյան գործուղումների անբավարար քանակի, արտերկրի միջազգային գիտաժողովներին մասնակցելու սուղ հնարավորությունների մասին:

Վերջին շրջանում հայագիտության և հումանիտար գիտությունների բնագավառում զգալի է դառնում երիտասարդ գիտական կադրերի քանակական աճի միտումը, ինչն ակնհայտ դրսևորվեց նաև Գյումրու միջազգային գիտաժողովում, որտեղ բավականին նկատելի ու արդյունավետ էր ինչպես ՀՀ, այնպես էլ մասնակից մյուս երկրների երիտասարդ պատմաբանների, ազգագրագետների, հնագետների ու արվեստաբանների առկայությունը:

Գիտաժողովում ներկայացվեցին մշակութային փոխառնչություններին վերաբերող մի շարք հետաքրքիր հաղորդումներ: Դրանցով հանդես եկան ինչպես հայ, այնպես էլ արտասահմանի հետազոտողներ՝ Ա.Գրիգորյան /Հայաստան/,

Ա. Դաղեսյան /Լիբանան/, Տ. Մարգսյան, Ն. Բերեժնայա /Ուկրաինա/, Ի. Սարուխանովա, Ի. Կրոտենկո/Վրաստան/, Դ. Սենան, Ջ. Ալլաբերդինա, Ա. Աթանա /Թուրքմենստան/, Լ. Բորիս, Ռ. Կոնդոր, Լ. Բուրիկինա, Ն. Դենիսովա/Ռուսաստան/, Վ. Պլոսկին /Ղրղզստան/, Վ. Բեսոլով /Հյուս. Օսեթիա/, Պ. Տոնապետյան, Մ. Դոմիեն /Ֆրանսիա/ և այլք:

Ժողովուրդների պատմամշակութային ժառանգության ուսումնասիրությունը համաշխարհային ժամանակակից հումանիտար գիտության հիմնախնդիրներից է, որը ներկայումս բուռն զարգացում է ապրում հատկապես հետխորհրդային տարածքի երկրներում: Այստեղից էլ՝ այն որոշակի հետաքրքրությունը, որ դրսևորվեց Գյումրու միջազգային գիտաժողովի նկատմամբ ԱՊՀ երկրների հումանիտար բնագավառի գիտնականների կողմից: Գիտաժողովին մասնակցելու հայտ էին ներկայացրել այդ երկրների շուրջ 80 գիտնականներ, մասնակցեցին 52-ը՝ հայկական լսարանին ծանոթացնելով ռուս, հյուսիսկովկասյան, վրացի, ուկրաինացի, թուրքմեն, քուրդ, ղրղզ և այլ ժողովուրդների պատմության, բանահյուսության, ազգագրության, հնագիտական հուշարձանների, հոգևոր ու նյութական արժեքների ուսումնասիրության, պահպանման և քարոզչության բնագավառում առկա նորություններին:

Գիտաժողովը, որ տեղի ունեցավ «Գյումրին ԱՊՀ 2013թ. մշակութային մայրաքաղաք» միջպետական ծրագրի շրջանակներում, հարուստ էր մասնակիցների աննախադեպ քանակով, քննարկվող հարցերի թեմատիկ բազմազանությամբ, մասնակից երկրների լայն աշխարհագրությամբ ու արդյունավետ կազմակերպվածությամբ վերջին տարիներին հանրապետությունում տեղի ունեցած մեծամասշտաբ գիտագործնական միջոցառումներից է:

Գիտաժողովը փաստեց, որ վերջին երկու տասնամյակներին հանրապետության երկրորդ քաղաքը ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի ջանքերով իրավամբ դարձել է պատմամշակութային ժառանգության խնդիրներին նվիրված հանրապետական ու միջազգային գիտական միջոցառումների մասնակիցների ճանաչված հանդիպատեղի:

Գիտաժողովը փաստեց նաև այն բուռն հետաքրքրությունը, որ գիտության աշխարհը դրսևորում է ժողովուրդների հոգևոր և նյութական մշակույթի գիտական արժևորման և գնահատանքի հարցում: Հայաստանի և արտերկրի հնագետների, պատմաբանների, բանագետների, ազգագրագետների, բանասերների և հումանիտար ոլորտի այլ մասնագետների համատեղ գիտական ֆորումն արձանագրեց ժողովուրդների պատմամշակութային ժառանգության ժամանակակից ուսումնասիրությունների հիմնախնդրային ընդհանրություններ ու առանձնահատկություններ, մոտեցումների տարբերություններ, միաժամանակ օգնեց ծանոթանալու հումանիտար հետազոտությունների բնագավառում տարբեր երկրների դրական փորձին ու ձեռքբերումներին և, անշուշտ, նաև կնպաստի համատեղ գիտական ծրագրերի ի հայտ գալուն:

Գիտաժողովը նաև ըստ ամենայնի նպաստեց հետխորհրդային տարածքի տարբեր ազգությունների գիտնականների միջև անձնային շփումների ու

կապերի,բարեկամական փոխհարաբերությունների ձևավորմանը:

Գիտաժողովի աշխատանքներին մասնակցում էին ՀՀ Շիրակի մարզպետ Ֆ.Յոլակյանը,Գյումրու քաղաքապետ Ս.Բալասանյանը, ՀՀ ԳԱԱ հայագիտության և հումանիտար գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յու.Սուվարյանը, Բաժանմունքի գիտահետազոտական ինստիտուտների տնօրեններ, հայրենական գիտության ու մշակույթի բնագավառի բազմաթիվ երևելիներ:

Գյումրու միջազգային գիտական ֆորումի մասնակիցները նաև որոշեցին «Պատմամշակութային ժառանգություն և արդիականություն» խորագրով հաջորդ միջազգային գիտաժողովը ԱՊՀ երկրների մասնակցությամբ Գյումրիում գումարել 2016թ. աշնանը:

❖

«Գյումրին՝ ԱՊՀ 2013թ. մշակութային մայրաքաղաք» միջոցառման ծրագրի շրջանակներում 2013թ. հոկտեմբերի 4-5-ը ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնն անցկացրեց «Ավանդական երաժշտության և աշուղական երգի միջազգային փառատոն, որին մասնակցեցին շուրջ 50վարպետ-կատարողներ, երաժշտական և պարային խմբեր, արվեստագետներ Հայաստանի Հանրապետությունից, Տաջիկստանից, Ղազախստանից և Թուրքմենիայից:

Հոկտեմբերի 2-ին փառատոնի շրջանակներում Գյումրու «Բեռլին» հյուրերի տանն անցկացվեց Կլոր սեղան՝ «Արևելյան ավանդական երաժշտության զարգացման արդի միտումները» թեմայով,

որը նվիրված էր արևելյան դասական երաժշտության ոլորտներից մեկին՝ մուղամաթին: Հայ ունկնդրին պատմատեսական ուսումնասիրությունների հիման վրա ներկայացվեց տաջիկական Շաշմակոմ ժանրային համակարգի ավանդական նկարագիրն ու արդի զարգացումների հանգամանալի վերլուծությունը: Համերգ-դասախոսությամբ հանդես եկավ Տաջիկստանի Հանրապետության ժողովրդական արտիստ, արվեստագիտության թեկնածու, Դուշանբեի «Նավո» ավանդական երաժշտության ակադեմիայի տնօրեն Աբդուվալի Աբդուռաշիդովը:Հաջորդիվ ծավալված աշխույժ երկխոսությամբ երևակվեցին մի շարք զուգահեռներ և ազգային ինքնության դրսևորումներ հայկական ու տաջիկական բանավոր ավանդույթի պրոֆեսիոնալ երաժշտության այս ոլորտում:

Հոկտեմբերի 3-ին ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնում տեղի ունեցավ թեմատիկ քննարկում՝ ԱՊՀ երկրներում երաժշտական հնէաբանության տարբեր ոլորտներում կատարվող աշխատանք-

ների, նոր ձեռքբերումների և դրանց համադրման, մշակութային զուգահեռների անհրաժեշտ անցկացման վերաբերյալ: Հանդես եկան Կենտրոնի տնօրեն՝ բան. գիտ. դոկտոր Ս.Հայրապետյանը, գիտաշխատող՝ արվեստագիտության թեկնածու Հ.Հարությունյանը, Թուրքմենիայի Պատմության ինստիտուտի գիտաշխատողներ՝ պատմական գիտությունների թեկնածուներ Դուրդիմուրատ Անեները և Ջումադուրդի Անեները: Հայ հնագետների, երաժշտագետների հետ քննարկվեցին պեղածո նվագարանների, դրանց ծագումնաբանության և ավանդական երաժշտության մեջ կրած փոխակերպումների ուսումնասիրման խնդիրներ:

Փառատոնի հանդիսավոր բացումը և առաջին համերգը տեղի ունեցան հոկտեմբերի 4-ին Գյումրու «Հոկտեմբեր» մշակութային կենտրոնում: Նախասրահում, որտեղ բացվել էր ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, նկարչուհի Սուսաննա Մկրտչյանի Սլեքսանդրապոլ-Գյումրու քաղաքային մշակույթին նվիրված գեղանկարչական աշխատանքների ու կոլաժների ցուցադրությունը, հանդես եկան Գյումրու քաղաքապետարանի, արվեստի դպրոցների դեղանարների և պարային խմբերը՝ ավանդական պարերի ժամանակակից բեմադրությամբ: Աշուղ Շերամի «Ամեն առավոտ» երգը որպես կանացի ծանր պար, ներկայացրեց մենապարուհի Հ.Մկրտչյանը՝ Ալեքսոլի ավանդական հագուստի արդիականացված նմուշով:

Փառատոնի հանդիսավոր բացումն սկսվեց կենտրոնի դահլիճում՝ ողջույնի և բարեմաղթանքների ջերմ ելույթներով: Հանդես եկան Գյումրու փոխքաղաքապետ Ռ.Մանոյանը, Շիրակի մարզպետի խորհրդական Հ.Կիրակոսյանը, Գյումրու քաղաքապետարանի մշակույթի բաժնի վարիչ Ա.Կարապետյանը, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի գիտաշխատող, փառատոնի աշխատանքների համակարգող Հ.Հարությունյանը: Բանախոսները կարևորեցին փառատոնը Գյումրու ավանդական երաժշտական մշակույթի հարատևման, հասարակության մեջ ազգային ոգու և ինքնության ամրապնդման տեսանկյուններից:

Այնուհետև հատուկ ծրագրով հանդես եկան Գյումրու ժողովրդական նվագարանների պետական նվագախումբն ու մենակատարները /երգիչներ՝ Մ.Մալխասյան, Ն.Հարությունյան, Ա.Միրաքյան, Կ.Մայիլյան, թառահար Հ.Մուրադյան, դուդուկահար Տ.Կարապետյան/, գյումրեցի կատարողներ, միջազգային մրցույթների դափնեկիրներ Գ.Նորոյանը, Կ.Շաբոյանը, Ա.Վալեսյանը: Տաջիկական «Նավո» և «Իրոք» մակոմներով ելույթ ունեցավ Տաջիկստանի Հանրապետության ժողովրդական արտիստ Ա.Աբդուռաշիդովը:

Փառատոնին համերգային ընդգրկուն և բազմաժանր ծրագրով հանդես եկավ նաև ավանդական երաժշտության նորաստեղծ «Նարեկացի» անսամբլը /գեղ. դեկավար՝ Հովիկ Սահակյան/, որտեղ ընդգրկված էին նաև հայկական հնագույն տավիղ, սանթուր և քամանչա նվագարանների ճշգրիտ կրկնօրինակները: Հնչեցին հայ ժողովրդական, միջնադարյան գուսանական և հոգևոր երգերի եզակի նմուշներ:

Համերգային ծրագրում յուրահատուկ տեղ էին զբաղեցրել խիստ ավանդական ժանրերի արդի մեկնաբանումներ՝ վկայելով ավանդույթների պատշաճ և բնական զարգացման և արդիա-

կանացման հնարավորությունների մասին:

Հոկտեմբերի 5-ին Գյումրու Աշուղ Շերամի անվան երաժշտական դպրոցի դահլիճում տեղի ունեցավ մուղամի վարպետների համերգ-հանդիպում, որի բովանդակային հիմնադրույթները ծավալվեցին արևելյան հնագույն դասական ժանրերից մեկի՝ մուղամի ազգային ինքնատիպ եկարագրի, գեղագիտական ու գեղարվեստական պատշաճ մատուցման, ավանդական եվագարանների երվազացանկում երա տեղի ու անհրաժեշտության, հատկապես մեզանում որոշակի կարծրատիպերից ձերբազատվելու հիմնախնդիրների շուրջ: Գյումրեցի վարպետների եվագին ու դիտարկումներին համահունչ էին Տաջիկստանի Հանրապետության ժողովրդական արտիստ Ա.Աբդուռաշիդովի տեսակետները բանավոր ավանդույթի այս կարևոր ժանրի մերօրյա դրսևորումների ստեղծագործական փնտրտուքների ու լուծումների մասին: Հայ ետաջիկ վարպետները համադրեցին դասական Չարգյահ մուղամի մեկնաբանությունները:

Հոկտեմբերի 5-ին Գյումրու «Պրոգրես» համալսարանի դահլիճում տեղի ունեցավ հայ աշուղական երգի համերգ-մրցույթ, որին մասնակցեցին չորս աշուղներ՝ սազանդարների անսամբլի /քամանչա, թառ, ուդ, դուդուկ, դհոլ/ եվազակցությամբ: Միայն հեղինակային կատարումներով հանդես եկան աշուղներ Երամը/Երևան/, Աստղանուշը /Երևան/, Սահանուշը /Սպիտակ/ և շիրակցի միակ աշուղ Արամայիսը /Կրասար-Գյումրի/: Աշուղական ավանդական տաղաչափությամբ հորինված երգերի ծավալուն շարքն ավարտվեց աշուղների հարց ու պատասխան երգերով, որոնք հիշեցրին հեռավոր աշուղական մեջլիսների սրամիտ հարցերն ու վարպետ պատասխանները: Մերօրյա աշուղներին լիովին հաջողվեց դահլիճում ստեղծել և տնականորեն պահել աշուղական անմիջական երգաստեղծության և մրցակցության թեժ մթնոլորտը, ինչը հնագույն այս արվեստի ավանդականության վիթխարի ներուժի վկայությունն էր:

Գյումրու «Ավանդական երաժշտության միջազգային փառատոն»-ը աշուղական մրցույթի շիկացած ստեղծագործական մթնոլորտում էլ ամփոփվեց ոչ միայն մասնակից աշուղների ջերմ բարեմաղթանքներով, այլև կազմակերպիչ՝ ՇՀՀ կենտրոնի տնօրեն Ս. Հայրապետյանի խոսքով այն մասին, որ Գյումրիում վաղուց հասունացել է և այսօր կենսականորեն անհրաժեշտ է հիմնել ավանդական երաժշտության կենտրոն՝ խնամքով ի մի բերելով Ալեքսանդր-Լենինականի հնուտ վարպետ-կատարողների ձայնագրություններն ու դրանց ուսումնասիրությունները, ավելացնելով մերօրյա ժամանակակից կատարումները՝ վառ պահելով ավանդական բանավոր արվեստի չխամրող հրմաքն ու գեղագիտական ներգործությունը:

Փառատոնը գնահատվեց որպես յուրօրինակ խթան վերականգնելու և շարունակ զարգացնելու Գյումրու աշուղական դպրոցի ավանդույթները: Փառատոնի շրջանակներում տեղի ունեցած հանդիպումները, որոնք վերածվեցին ստեղծագործական երկխոսությունների, անտարակույս, շարունակվելու են հեռանկարային ծրագրերում:

❖

«Գյումրին ԱՊՀ 2013 թ. մշակութային մայրաքաղաք» ծրագրի շրջանակներում ԳԱՍ ՇՀՀ կենտրոնը նոյեմբերի 13-ին Գյումրու ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարանի բակում անցկացրեց Հացի փառատոն/ծրագրի ղեկավար՝ կենտրոնի ավագ գիտաշխատող Կարինե Սահակյան, համադրող՝ Ռոզա Հովհաննիսյան/:

Շիրակի մարզի ազգաբնակչությունը և Գյումրի քաղաքի տասնյակ հազարավոր բնակիչները տոնը դարձրին ԱՊՀ ժողովուրդների տոնախմբություն: Հացի փառատոնը ծառայեց ազգային ավանդույթների վերականգնման նպատակին, ժողովրդական մշակույթը, ազգային ծեսերն ու տոներն ավելի կազմակերպված դարձնելուն որպես համայնքի զարգացման գրավական: Տոնին, որն անցկացվում էր «Գյումրու օրվա» շրջանակներում, մասնակցեցին նաև ՀՀ վարչապետ Տ.Սարգսյանը, ՀՀ մշակույթի նախարար Հ.Ղազոսյանը, Շիրակի մարզպետ Ֆ.Ցոլակյանը, Գյումրու քաղաքապետ Ս.Բալասանյանը, բազմաթիվ հյուրեր Սփյուռքից և արտերկրից:

Տոնին հացարարման իրենց մշակույթով մասնակցեցին Շիրակի մարզի գրեթե բոլոր գյուղերը, Արագածոտնի մարզի մի շարք գյուղերի բնակչությունը, ինչպես նաև Հայաստանի ազգագրական տարբեր շրջանների ներկայացուցիչներ: Հացատոնը Գյումրիում սկսվեց Անդաստանի կարգով: Տոնի մասնակիցներին բաժանվեցին խաչբուտներ, ցորենից հյուսված կենաց ծառեր: Տոնակատարության վայրում հողամշակույթով ներկայացվեց Շիրակի մարզի քարտեզը /նկարիչ՝ Ե.Մելրոյան/: Տեղանքը զարդարված էր հատիկապաշտություն արտահայտող խորհրդանիշերով /Աշոտրա աստվածուհու, Արևագալի, արու և էգ թռչունների ցորնազարդ կոլաժներ/, ցուցադրվեցին հայկական ավանդական գորգեր, արծաթե ապարանջաններ, կանացի գոտիներ՝ ռիթմիկ կրկնվող հասկերի պատկերներով:

Գեղարվեստական ցուցադրումներով հացարարմանը նվիրված տոնին մասնակցեցին բազմաթիվ նկարիչներ ու արվեստագետներ, անհատ ստեղծագործողներ /Լ.Ազուլեցի, Ս.Մկրտչյան, Հ.Վարդանյան, Վ.Թուխյան և այլք/: Տոնակատարությանը ազգագրական ոգի ու շունչ հաղորդեցին «Կարին» ավանդական երգի-պարի համույթը /գեղ. ղեկավար՝ Գ.Գինոսյան/, Գյումրու Սբ Յոթվերք եկեղեցու երգչախումբը, ԳՊՄԻ-ի երաժշտության բաժնի երգչախումբը, Դավիթ և Արմենուհի Ամալյանների, ճանաչված տենոր Վանո Թադեոյի կատարումները, որոնք բացառապես նվիրված էին հացին ու հողին, գութանի փառաբանմանը: Տոնական օրվա կիզակետը թոնրի հիմնարկեքն էր՝ մասնակցութ-

յամբ Գյումրու մի քանի նախակրթարանների սաների, որոնք իրենց ձեռնափերի մեջ սրբազան դողով պահել էին ցորենի հատիկներ՝ թռների հիմքում շաղ տալու համար:

Տոնակատարության ընթացքում եղան նաև մի շարք ցուցադրություններ՝ բրուտագործների աշխատանքների, Շիրակի մարզի հացամշակութային բույսերի ընտրանու, ավանդական տարբեր ուտեստների,հացարարման տարբեր փուլերի, հացի հետ կապված հավատալիքների ու պաշտամունքային ձևերի:

Տոնի ընթացքում բաժանվեց լավաշ հացի մատաղ:

Որպես ամփոփում տոնական օրվա՝ հնչեց «հաց» բառը աշխարհի տարբեր լեզուներով:

Հացի տոնի խորհուրդն էր՝ միավորել մարդկանց, այն դարձնել հոգեվիճակ, դարձ կատարել դեպի այն արժեքները, որոնք ապրեցնող են և վկայում են մեր ժողովրդի արարող ոգին: Հացի փառատոնի հաջողությունն ակնհայտ էր, ինչն էլ հանդիսացավ այն ավանդական դարձնելու գրավական: